

ՀԱՅ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Խ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ

VII ¹⁾

Օճախի պաշտամունքի հետ շատ սերտ կցորդուած է կրակի պաշտամունքը: Հին յոյների և հռովմէացիների տան օճախի մէջ օր ու գիշեր անդադար պիտի կրակը վառ մնար և բնաւ չպէտք է հանգչէր: Տան տիրոջ սրբազան պարտականութիւնն էր պահպանելու այդ կրակը. վայր եկել-տարել էր նրան, եթէ կրակը մարէր: Իւրաքանչիւր երեկոյ քնից առաջ կրակի վառ ածուխները ծածկուած էին մոխրով, որպէսզի կրակը բոլորովին չհալուէր. առաւօտեան, երբ ամենքը զարթնում էին, տանտիրոջ առաջին հոգսն էր լինում մոխրի տակ առկայծող այդ կրակը վերստին կենդանացնել ու վառել: Կրակը դադարում էր տան օճախի վրայ վառուել, բորբոքուել միայն այն ժամանակ, երբ մեռնում, ոչնչանում էր ամբողջ ընտանիքը, նրա բոլոր անդամները: Հանգած, մարած օճախը հին ժողովրդների հասկացողութեամբ ընտանիքի ոչընչացման, անհետացման նշանաբանն էր: Կրակի այդ սրբազան նշանակութիւնը նոր չէ: Դա նոյնքան հին է, որքան և մարդու գոյութիւնը, մարդկութեան պատմութիւնը:

Կրակի տարեբային ոյժը, որ ամեն ինչ այրում էր կիզում, ոչնչացնում. ոյժը, որ միևնոյն ժամանակ գիտէր ծառայել մարդու նիւթական բարեկեցութեանը, ջերմու-

1) Տես Ազգ. Հանդէս դիրք XIII.

Թիւն տալով նրան ցրտերին, լոյս մատակարարելով նրան զիշերային խաւարին. սրբագործւում էր իբրեւ մի ամենակարող տարր։ Եւ այդ կրակը մարդկային կեանքի գործչէր։ Նախնական մարդը հանապազ տեսնում էր, Թէ ինչպէս ահռելի որոտումներով երկնքից թաւալւում էին շանթեր, ինչպէս գետնի անդունդներից ժայթքում էին կրակ և ծուխ, որոնք այրում էին մարդկային բնակութիւնները, հրդեհում էին ամեն ինչ, ոչնչացնում, հաւասարացնում երկրներ։ Ահա արդէն նախնական մարդը աստուածացնում էր կրակի այդ տարերքային ոյժը, տալիս էր նրան սրբազան նշանակութիւն, որը մարդկային երեւկայութեան մէջ հիւսում էր և ստեղծում կրօնական մի պաշտամունք, որի բեկորները մինչև այսօր պահպանուել են ռամկական հաւատալիքների, սնոտիապաշտութիւնների մէջ։ Հին և նոր ժողովրդների պատմութիւնը մեզ աւանդել է բազմաթիւ փաստեր կրակի պաշտամունքի, կրակի աստուածութեան մասին։ Այդ կողմից արիական ժողովրդների կրօնական պատմութեան մէջ լիակատար և մանրամասն տեղեկութիւնների ենք հանդիպում։ Կրակի աստուածը այնտեղ յայտնի է զանազան անուններով ու տարբեր ձևերով։ Ոչ մի տեղ աստուածի դէմքը այնքան պարզ ու որոշակի հանդէս չի գալիս, ինչպէս նրա սանսկրիտի Ագնի անունը։ մէջ, մի բառի, որը Թէն կորցրել է իր աստուածային նշանակութիւնը, բայց պահպանել է իր իմաստը լաթինական ignis (կրակ) բառի մէջ։ Ագնիի անունն առաջին բառն է կազմում Բիգ-Վեդայի սրբազան առաջին օրհներգի մէջ։ Մինչև օրս էլ մնացել են Զօրօ-աստրի հետեւորդները, որոնք, ինչպէս հերքները, երբեմն Բագուի շրջաններում, կամ պարսերը Հնդկաստանում, երկրպագում են կրակին։ Սլաւոնական պատմութիւնն էլ ներկայացնում է կրակապաշտութեան մի քանի ուղղակի հետքեր։ Ինչպէս օրինակ՝ բոհեմայի հեթանոսների համար ասում էին, որ սրանք պաշտում են կրակը, անտառները, քարերը և այլն։ Կլասիկ ժողովուրդները յոյները և լաթի-

նացիները ունէին կրակի յատուկ աստուածներ՝ Հեժիւսը և Վուլկանը։ Նոյն նշանակութիւնն էր վայելում հին հայոց Պանթէօնի Միմր աստուածը, աներեոյթ և աննիւթ կրակի աստուածը, մինչեւ կրակի աստուածի՝ Միհրի տեսանելի, նիւթական արտայայտութիւնն երևում էր Արեգակն ու Լուսին աստուածների մէջ։

Սակայն ինչպէս այդ կրակը դարձաւ աստուածներից դէպի մարդիկ։ Հին յոյները իրենց դիցաբանութիւնների մէջ աւանդում են, որ կրակն առաջին անգամ աստուածներից յափշտակեց Պրօմէթէոս և տուեց մարդկանց, և հաւայդ օրից մարդիկ հնարաւորութիւն ունեն օգտուելու կրակի բարիքներից։ Արդեօք նոյնը չի մտածում հայկական հաւատալիքը, որ ասում է, թէ կրակը երկնքից իջել է կայծակով և մնացել կայծաքարի մէջ, որից մարդիկ յետոյ գայլախազով (չախմախով) խփել, հանել են։

Կրակի այդ սրբազան նշանակութիւնը հին ժողովուրդները ցոյց էին տալիս ոչ միայն տեսականօրէն, այլ և գործնականապէս։ Նրանք հաւատում էին, որ կրակի միջոցով կարելի էր նիւթական կապ հաստատել աստուածների, ոգիների հետ։ Աստուածներին ու ոգիներին մատուցւող բոլոր զոհերը ու բնական ընծաները այրւում էին խարոյկների կամ յատուկ զոհարանների վրայ։ Այս դէպքում հին կրօնական վարդապետութիւնն այն հայեացքն էր պաշտպանում, որ բոլոր զոհաբերութիւնները, կրակի վրայ այրուելով, անցնում են անմիջապէս աստուածներին, որոնք միայն այդ եղանակով հնարաւորութիւն ունեն մարդկանցից, մահկանացուներից ստանալ և ընդունել բոլոր իրենց մատուցած ընծայաբերութիւնները, վայելել իրենց պաշտողների կողմից առաջադրած տուրքերը։ Սրանով պէտք է բացատրել այն փառահեղ զոհաբերութիւնները, յոյակեզմէտը հին հայոց քրմերի պաշտօնական ծիսակատարութիւնների միջոցին, երբ հարկւրաւոր, բիւրաւոր ցուլեր, առջարներ ողջ ողջ կիզւում էին զոհարանների առաջ։ Մեր պատմագիրները մի շարք

տեղեկութիւններ են հաղորդում, թէ հին հայոց նախա-
րարներն ու թագաւորներն ինչպիսի հանդիսակատարու-
թեամբ զոհեր էին մատուցանում աստուածներին, զոհա-
րաններին՝ բազիկների վրայ այրելով առաջադրած ըն-
ծաները:

Հեթանոսական կրօնն անցաւ, վերացաւ, բայց ողջա-
կէզները սրբագործուելով տակաւին շարունակեցին իրենց
գոյութիւնը պահպանել քրիստոնէութեան մէջ. այնքան
խիստ էր արմատացած ժողովրդի կրօնական աշխարհա-
յեացքում զոհաբերութիւնների նշանակութիւնը: Եւ ահա
այդ ողջակէզները մինչև օրս պահպանեցին իրենց իմաստն՝
միայն արտաքուստ, ձևականօրէն փոփոխուելով: Արդի ժո-
ղովրդական սովորութիւնների մէջ գոյութիւն ունեցող
«մատաղի» գաղափարը ողջակէզի, կրակով զոհաբերու-
թիւն անելու մնացորդն է:

Կրակի պաշտամունքի նշանները հին հեթանոսական
կրօնից մնացել են հայաբնակ շատ տեղերում այն սովո-
րութիւնների մէջ, որոնք կատարում են Տեառնընդառաջի-
տօնին, այսպէս անուանուած «տրնդէզ» վառելուն մէջ:
Սա երևի մի կրօնական, սրբազան պար է եղել, որ հին
հեթանոս հայերը կատարելիս են եղել տարուայ որոշ օրե-
րին կրակի աստուածութեան տօներին: Ինչպէս յայտնի է,
նոյն իսկ այժմեան եկեղեցական ծէսերի մէջ պահպանուել
են մի քանի հեթանոսական սովորութիւններ: Ահա այդ
սովորութիւններից մէկն էլ Տեառնընդառաջի երեկոյեան
հանդիսաւոր ժամերգութեան ժամանակ ջահի կամ աշտա-
նակի վառելն է, որից ներկայ եղող ժամաւորներն էլ
վառում են իրենց ձեռքերում ունեցած մոմերը և այդ-
պէս վառած տուն են տանում. այդ մոմը ամբողջ տարի
պահում են, իրրև մի սրբութիւն: Շատ գիւղերում քահա-
նաները թափօրով դուրս են գալիս գաւիթը, ուր նշանած
տղաները պատրաստած են լինում ցրտենու ճիւղերով
խաչաձև խարոյկ. քահանան աղօթքներ է ասում և օրհ-

նում այդ խարոյկը, որը այդ միջոցին երիտասարդները իրենց վառ մոմերով վառում են¹⁾։

Սակայն մեծ մասամբ ընդունուած է այդպիսի խարոյկներ վառել իրենց տան կտուրներում եկեղեցուց բերած մոմից, որը վառուած էր ջահից և ապա այդ խարոյկի շուրջը պար են բռնում և այլ տօնական ծէսեր կատարում։ Խիստ ընդուն է այդ ծիսակատարութիւնը Ջաւախքում²⁾։ Վրեթէ ամեն ընտանիք մոմ է գնում և երբ ժամասացութիւնը վերջանում է, միմեանց հրհրելով, կռուելով աշխատում են վառել մոմը ջահից և առանց հանգցնելու տանել տուն։ Այստեղ բազմաթիւ և հերթիկներում արդէն դիզուած են լինում խոտի կոյտեր, որ վառում են եկեղեցուց բերած մոմերով։ Այս ժամանակ ամեն կողմից ճեղքազի ծուխը քուլայ քուլայ վեր է բարձրանում։ Մերերն ու պառաւները ուշի ուշով նայում են, թէ ծուխը որ կողմն է գնում և ըստ այնմ էլ գուշակութիւններ են անում։ Նրեխաներից սկսած մինչև ծերերը թռչկոտում են տէրնդազի վրայով, իսկ աղջիկներն ու կանայք պտտում են շուրջը՝ բոլորեքեան «Ո՛չ քորոտիմ, ո՛չ բորոտիմ» ասելով։ Մանր տղաներն ու աղջիկներն էլ յատուկ այս նպատակի համար գործուած գուլպաներ կամ արախչիներ են ձգում կրակը, որպէս զի շնորհք ատանան։ Բայց սրանք բոլորը դադարում են, երբ նորապսակ ամուսինները գալիս են տէրնդազի շուրջը պըտըտելու։ Հարս ու փեսայ միմեանց բռնած, ձեռներին զոյգ մոմեր, հարսի կողքին սանամայրը, փեսինը՝ կնքահայրը կանգնած, ձեռներին մի մի մոմ, երեք անգամ պըտըտում են։ Տէրնդազի շուրջը պտտեցնում են նորածին երեխային, որ բառասունըր լցուի։ Իսկ ամուլ կանայք իրենց ուշխուրի ծայրն են վառում, որ երեխայ ունենան։

Հայերը այդ սովորութեան մէջ երեկ արտայայտում էին իրենց հաւատը դէպի կրակի մաքրիչ ոյժը, նրա աս-

1) Ե. Լալայեան. Վարանդա, հր. 289. Նոյն Սիսեան, հր. 153.

2) Նոյնը՝ Ջաւախք, երես 287—288.

տուածային ու սրբազան ընաւորութիւնը, ինչպէս և սլաւները ու մի քանի ժողովրդներ, որոնք հնում ընակւում էին Եւրոպայում

Ժամանակակից ռաների և մի քանի սլաւ ժողովրդներին մէջ գոյութիւն ունի մի սովորութիւն, որ մեծ նշմանութիւն ունի հայկական «տէրնդազի» հետ. այսպէս անուանած իման Կուպալայի տօնին, յունիսի 23-ին, երեկոյեան խարոյկներ են վառում, չորս բոլորքը պար բռնում կամ կրակի վրայով թռչկոտում են ու երգում: Նոյնանման փաստ մենք գտնում ենք ժամանակակից իրլանդացիների մէջ, որոնք խարոյկներ վառելով թռչկոտում, երգում, պարում են կրակի շուրջը որոշ և յատուկ օրերին:

Կրակի պաշտամունքը սրանով չի վերջանում հայերի հաւատալիքների մէջ: Ընտանեկան պաշտամունքը, մոտիապաշտութիւնները պահպանել են բազմաթիւ սովորութիւններ, որոնք ապացուցանում են թէ ճիշտ խորն էին արմատացած ժողովրդի կրօնական հայեացքների մէջ կրակի կուլտին վերաբերեալ հաւատալիքները, որ դարերի ընթացքում ռամկական կրօնական փիլիսոփայութիւնը չէր կարողացել թօթափել իրենից նրանց ազդեցութիւնը:

Վարանդայում, երբ նորապսակները եկեղեցուց վերադառնալով մօտենում են տանը, թագաւորի մայրը մի սկուտեղի մէջ երկու լաւաշ հաց և մի փոքրիկ ափսէի մէջ կրակ՝ վրան խունկ դրած պտտեցնում են տան չորս անկիւնը, ապա դուրս գալիս և երեք անգամ պտտում թագաւորի և թագուհու շուրջը: Կրակը այստեղ տնային, աստուածութեան նշանաբանն է, իսկ խունկը՝ դա այն քաղցրաբարոյ այրւող նիւթն է, առանց որի, ինչպէս յայտնի է, չէին կատարւում թէ հին հեթանոսական և թէ արդի քրիստոնէական կրօնական ծիսակատարութիւններն ու հանդէսները:

Այժմ էլ, ինչպէս հին հայերի, հռովմէացիների, յոյների և այլոց մօտ, հայ ընտանեկան օճախներում դիշեր

ցերեկ կրակը պիտի վառ պահուած լինի և այդ պարտականութեան հոգար դրուած է տանտիրուհու վրայ, որ ամեն անգամ երեկոյեան, քուն մտնելուց առաջ հոգատարութեամբ ծածկում է կրակը մոխրով, որպէսզի կրակը պահուի մինչև առաւօտ, երբ լուսաբացին նոյն տանտիրուհին նոր փայտեր, կամ ածուխ աւելացնելով վառում, բորբոքում է կրակը: Կրակը սրբութիւն է համարւում, ուստի նրանով երդւում են, նրան օգնութեան են կանչում անէծքների ժամանակ: Նոյն այդ պատճառով չեն կոխում, ոտք չեն դնում, չեն թքում, ջուր չեն ածում կրակի վրայ: Նրա վրայից չեն անցնում, գիշերները երբէք կրակ փոխ չեն տալիս: միշտ ասում են «կրակը օրհնի», մեղք համարելով ասել «կրակը հանգցրու»: Սակայն երբ բացօդեայ տեղում են կրակ անում, որպէս զի արգելին սատանաներին ու շար ոգիներին կրակից տանելու, վերան խաչակնքելով ջուր են ածում: Ընդհանրապէս կրակը հանգցնելիս են փչում, այլ վրան մոխիր են ածում: Բորչալիում գիւղացիները հաւատալով, որ կրակը կարող է չարերին հալածել, անթեղ անելիս խանձողի կոթը դէպի դուռն են ուղղում, որպէսզի չարը ներս մտնելիս դէպի նա գայ և հալածուի:

Կրակի այս սրբազան նշանակութիւնը ժողովուրդը միշտ խառնում է օճախի պաշտամունքի հետ: Ուստի շատ տեղերում այդ երկու պաշտամունքները միացած են ու վերածնւել են մի կուլտի: Կրակ, օճախ կամ թոնիր հոմանիշ նշանակութիւն են ստանում ժողովրդական հաւատալիքների մէջ և դառնում են մի կուլտի առարկայ:

VIII

Հին հայոց հեթանոսական կրօնն ուսումնասիրելիս տեսնում ենք, որ նա տոգորուած է դուալիստական վարդապետութեամբ: Հին հայոց կրօնը, ինչպէս և հին պարսից զրադաշտականը, աշխարհիս արարչագործութեան

մէջ ընդունում էր բարի ու չար էակների գոյութիւնը: Ինչպէս որ լոյսն ու խաւարը միշտ իրար ներհակ հասկացողութիւններ են, որոնք միմեանց դէմ գոյութեան կռիւ են մղում, այնպէս էլ բարին ու չարը պարփակում են իրենց մէջ մարդկութեան կեանքի, աշխարհիս գոյութեան երկու ներհակ զաղափարները: Եւ ահա ժողովրդական հին փիլիսոփայութիւնը լոյսն հոմանիշ է դարձրել բարուն, իսկ խաւարն ու մութը՝ չարին: Մարդուս հոգևոր բարոյական կազմի մէջ, ինչպէս և տեսանելի բնութեան մէջ, հէնց նրա գոյութեան առաջին օրուանից հանդէս են գալիս այդ երկու տարրերը՝ բարին և չարը: Այդ երկու տարրերը միշտ իրար հետ կուռւմ, պատեւազմում են իրենց գոյութիւնը պահպանելու և մարդկութեան վրայ տիրապետելու նպատակով: Սակայն բարին, ինչպէս ուսուցանում էր դուալիզմի վարդապետութիւնը, վերջ ի վերջոյ պիտի յաղթանակի, իսկ չարն ընդ միշտ խորտակուելով պիտի հեռանայ ասպարիզից, պիտի իսպառ վերանայ այս աշխարհից:

Թէև հին հայկական Պանթէօնի մէջ բարութեան, բարի գերագոյն էակի, աշխարհիս արարչագործի Արամազդին կից չենք գտնում չարի, աշխարհիս աւերմունքի գերագոյն էակի՝ Ահրիմանի անունն, ինչպէս դա գոյութիւն ունի հին պարսից, հնդկաց և այլ կրօնական վարդապետութիւնների մէջ, բայց և այնպէս մենք տեսնում ենք, որ հին հայոց ամբողջ դիցաբանութեան մէջ կարմիր թելով անցնում է այդ դուալիզմը՝ բարի ու չար զաղափարների կրօնական փիլիսոփայութիւնը: Մանաւանդ դա աչքի է ընկնում երկրորդական աստուածների ու ոգիների անուններն և նշանակութիւնը վերլուծելիս: Ո՛չ միայն հեթանոսութեան մէջ է տիրապետել դուալիզմը, այլ և մասամբ անցել է քրիստոնէական վարդապետութեան մէջ: Թէև քրիստոնէութիւնը միաստուածութիւն է ընդունում, այն էլ միմիայն իբրև բարի, ամենաողորմած զաղափարով, այնուամենայնիւ քրիստոնէութեան մէջ գոյութիւն

ունի հրեշտակների ու սատանաների հասկացողութիւնը՝ բարի և չար գաղափարների այդ մարմնացումը:

Ուրեմն զարմանալի չէ, որ ևս առաւել ընտանեկան հաւատալիքների, պաշտամունքի մէջ հանդիպելու ենք այդ դուալիզմը: Հայ ժողովուրդը հաւատում է, որ կան բարի ու չար ոգիներ, լոյս ու արդար ոյժեր, խաւար և մութ ոյժեր, որոնք մասնակից են մարդու ամբողջ կեանքին: Առաջինները միշտ հովանաւորում, պաշտպանում են այն ընտանիքները ու սրանց անդամներին, որոնք երկրպագում, հաւատում են և ընդունում նրանց իբրև իրենց տան, օճախի սրբեր, աստուածութիւններ. ընդհակառակն երկրորդները ժողովրդի հաւատալիքով իրենց բնոյթի համեմատ յանապազ չարիք ու պատուհաս են հասցնելու ընտանիքին, միշտ փասս ու մահ են պատճառելու տան անդամներին: Այս դուալիզմը ահագին ծաւալ է բռնում հայ ռամկական հաւատալիքների մէջ, սոսկալի չափերով կաշկանդել է ժողովրդի սնոտիապաշտական երեւկայութիւնը: Հայ կինը, հայ ընտանիքի հայրը իր ամբողջ կեանքի, իր գործերի բովանդակ ընթացքում միշտ ղեկավարւում, միշտ շարժւում է այնպէս, որ չգրկուի բարի ու լուսաւոր ոգիների հովանաւորութիւնից և ընդհակառակն յանապազ միջոցներ է ձեռնարկում, զանազան «թիլիսմների» դիմում իր կեանքը, իր տան գործերը ապահովելու և անփնաս դարձնելու չար ու խաւար ոյժերի շահատակութիւններից: Այդ կողմից հայ ընտանեկան պաշտամունքը մի անսպառ շտեմարան է, ուր հայ ուսումնասէրը կրգտնի անչափ բազմաթիւ փաստեր ու տեղեկութիւններ կրօնական հաւատալիքների դուալիստական բնաւորութեան մասին, դուալիզմի, որը հազարաւոր տարիների ընթացքում անցել է նախնական հայ հեթանոսական կրօնական փիլիսոփայութիւնից և այսօր իր բեկորներով յիշեցնում է անցած-գնացած, հնութեան փոշով ծածկուած հայ ժողովրդական կուլտուրայի մասին:

Իւրաքանչիւր հայ ընտանիք, բացի իր հայրենական

պապերի ու նախահայրերի հոգիներին պաշտելու, ունի նաև իր ընտանեկան յատուկ պաշտպան սրբեր, տնային բարի հովանաւորողներ, այսպէս անուանեալ պահապան հրեշտակներ. հայ ժողովուրդը մինչև օրս էլ սովորութիւն ունի ընտրել և ունենալ իր տան, իր ընտանիքի համար յատուկ մի հովանաւոր, այս կամ այն սուրբը, որի պաշտպանութեան է նա յանձնում իր ամբողջ ընտանիքն և տունը: Որոշ օրերին աղօթքներ ու փառաբանութիւններ են մատուցանում, մատաղ և այլ զոհաբերութիւններ են անում այդ սրբին, զնում են ուխտի նրա անուան նուիրւած տեղերը, երկրպագում, համբուրում նրա մատունքները և այլն: Ջրերը կանայք, կամ այնպիսիները, որոնց զաւակները միշտ մահանում են, երգում են տալիս և ուխտ անում, որ իրենց առաջին ծնուած զաւակը ընծայաբերում են իրենց տան սրբին և սրա ծառան կրդարձնեն: Եւ ահա հին հռովմէացիների տնային աստուածները՝ պեկասներ, հին հայոց ընտանեկան աստուածները՝ դիւցազներն ու Բալներն այսօր վերափոխուել են ու մենք տեսնում ենք, թէ ինչպէս այս կամ այն հայ ընտանիքը իր տան հովանաւոր է համարում Ս. Սարգսին, Ս. Գէորգին, Ս. Մինասին և այլ սրբերին, ինչպէս և մի շարք բարի հրեշտակներին, որոնք տան միակ պահապաններն են հանդիսանում:

Եթէ ամուսնանում է հայ երիտասարդը, որի ընտանիքը Ս. Գէորգի հովանաւորութեան ներքոյ է գտնւում, այնպիսի աղջկայ հետ, որի ընտանիքի սուրբն էր համարւում Ս. Սարգիսը, այն ժամանակ աղջիկը, պսակուելով, յարում է արդէն իր նորատի ամուսնու տան ու ընտանիքի սրբի պաշտելուն: Նորահարսը դադարում է այլևս իր ծնողների, իր նախկին ընտանիքի սրբին՝ Ս. Սարգսին, ուխտագնացութեան գնալու, այլ դիմում է միշտ Ս. Գէորգի հովանաւորութեանը և այդ օրուանից սկսած նա Ս. Գէորգին անուանում է Վիմ մարդու տան սուրբը: Գանձակում իւրաքանչիւր ընտանիք մի որևէ սրբի չղուլ է, այսինքն նրան համարում է իր գերդաստանի օճախի սուրբ

և ծանր ըոպէներին նախ նրան է դիմում: Ուստի և ծննդաբերութեան ժամանակ յատուկ նրա համար մոմեր են վառում և տան երեխաներից մէկը 12 անգամ այդ սուրբին ծուներ է դնում¹⁾: Բացի այդ՝ Հայաստանի շատ տեղերում, երբ հարսը եկեղեցուց պսակադրութիւնից դառնում է դէպի նորափեսայի տունը և առաջին անգամ ոտք դնում նոր ընտանիքի մէջ, տան շէմքում խկոյն մորթում են աքլոր կամ մի ոչխար. այդ զոհաբերութիւններով ժովովուրդը մտածում է հայցել տան սրբերի գութն ու հովանաւորութիւնն ընտանիքի այդ նորեկ անդամի, այդ ընտանեկան կուլտին նոր յարողի վերաբերմամբ:

Իւրաքանչիւր տան մէջ ժողովրդի հասկացողութեամբ կան պահապան հրեշտակներ, որոնք ընտանիքի անդամներին հեռու են պահում զանազան փորձանքներից ու անփնասկացունում զանազան չար ոգիներից ու վտանգներից, հրեշտակներ, որոնք հոգս են քաշում այդ տան յարատե գոյութեան մասին: Ահա թէ ինչու ժողովրդի հաւատալիքների մէջ գտնում ենք բազմաթիւ հրեշտակներ, որոնք այս կամ այն բարի նպատակին են ծառայում:

Ամեն մի մանուկ ունի մի պահապան հրեշտակ, որ շարունակ սաւառնում է նրա շուրջը և պահպանում նրան: Երբ մանուկը քնում է, հրեշտակը իր թևերը պարզած հըսկում է նրա վրայ. և երբ զարթնում է, հրեշտակը խաղում է նրա հետ, զբաղեցնում, ուրախացնում է նրան: Այս հրեշտակը փնում է երեխայի մօտ մինչև որ երեխան սկսում է ճանաչել իր մօր, շրջապատող մարդկանց: Կան նաև հացի հրեշտակներ, որոնք կանգնում են թոնրի բերանին, երբ կանայք հաց են թխում, և ջան արահուսման հրեշտակներ, որոնք բնակւում են ալիւրի ամբարի վրայ: Այս վերջին տեսակի հրեշտակին շատ նման են իրենց նշանակութեամբ ջան դրոշմը, այսինքն տան բաղդի, հարստութեան և ապա ջաւառի դրոշմը հրեշտակները:

Ջաւախքի հայ հարսներն ու կանայք երեքշաբթի լոյս

¹⁾ Ե. Լալայեան, Գանձակի գաւառ, եր. 46.

չորեքշաբթի, հինգշաբթի լոյս ուրբաթ և շաբաթ լոյս կիւրակի երեկոները ժամասացութիւնից յետոյ այլևս չեն աշխատում և առազաստ չեն մտնում ի պատիւ Չորեքփոխի, Ուրբաքփոխի և Կիրակնափոխի ոգիներին, որոնց նրանք ծննդաբերութեան պաշտպան են համարում: Սրանցից երկուսը՝ Չորեքփոխը և Ուրբաքփոխը կոյս քոյրեր են, իսկ Կիրակնափոխը կամ Հիշտէքը սրանց երիտասարդ եղբայրն է: Ծննդաբերութեան ժամանակ սրանք գնում են ծննդկանի մօտ, Կիրակնափոխը նստում է դռան յետև և կատարում քոյրերի պատուէրները—դուռը փակ պահել, ջուր, հաւկիթ բերել և այլն. իսկ երկու քոյրերը կատարում են մանկաբարձուհու դերը. երբեմն էլ զանազան շրնորհքներ են պարգևում նորածնին¹⁾:

Նոյն այդ տնային պահապան հրեշտակների հովանաւորութեան ներքոյ էին գտնւում հայերի մէջ, ինչպէս և հին հռոմէացիների և յոյների մօտ, ճանապարհորդներն ու հիւրերը: Սրանով պէտք է բացատրել, թէ ինչու հայ ժողովուրդը մինչև վերջերս յայտնի էր իր հիւրասիրութեամբ, երբ օտար ճանապարհորդներին, գիւղ եկողներին իր տանը գիշերելու, հանգստանալու և կազդուրուելու էր պահում. դա մի ընդունելի գիծ է, որ յատուկ է նահապետական կեանքով ապրող ընտանիքներին ու գերդաստաններին, ուր հիւրասիրութիւնը գտնւում է տան պահապան հրեշտակների հովանաւորութեան տակ: Հիւրերը համարւում էին Աստուծոյ ուղարկուածներ, բարի հրեշտակներ՝ տան պահապանների հիւրեր. չընդունել այդ տեսակ հիւրին, օթեան չտալ ճանապարհորդին, սնունդ և կերակուր չմատուցանել նրան, կընշանակէր մեղանշել ընտանիքի սրբերի դէմ, բարկացնել տան պահապան հրեշտակին....

IX

Եթէ բարի ոգիները, պահապան հրեշտակներն այդքան մեծ թուով են հանդիսանում հայ ընտանեկան պաշտա-

¹⁾ Ե. Լալայեան, Զաւախք. երես 229—230.

մուռքի մէջ՝ դա հասկանալի է: Ժողովուրդը, ամեն կերպ աշխատելով ապահովեցնել իր գոյութիւնն, իր ընտանիքի յարատեւութիւնը, հաւատում էր, որ դրա համար բաւական էր այս կամ այն սրբի հովանաւորութեանը դիմել, իր տունը ընակեցնել զանազան բարի հրեշտակներով, անտեսանելի պաշտպաններով: Զէ՛ որ չար ոգիները, մութ և խաւար ոյժերը աւելի բազմաթիւ էին. չէ՛ որ նրանք ամեն մի բոլոր պատրաստ էին չարիք, փառ հասցնել մարդկանց: Սակայն այդ չարերը այնքան վնասակար ու թշնամական ընոյթի տէրեր են, որ դաւեր են լարում, կուռւմ են նոյն իսկ բարի ոգիների դէմ: Ուրեմն պէտք է երևակայել, թէ ժողովրդի ֆանտազիան ինչ աստիճանի սոսկալի գոյներով է ներկայացնում այդ անտեսանելի չար էակներին, որոնք լցրել են իրենցով ամբողջ ընութիւնն, համայն տիեզերքը: Մարդկային կեանքը, սկսած իր աշխարհ լոյս գալու առաջին օրից մինչև մահը, հանապազ ենթակայ է չարերի հալածանքներին ու դաւերին, որոնցից միշտ հարկաւոր է աչալուրջ պաշտպանուել:

Ահա այդ չար ոգիներն են, որոնք դժբաղդութիւն, հիւանդութիւն են հասցնում ընտանիքներին, ցաւ ու կրակիժ բերում մարդկանց, թունաւորում բազմաթիւ կեանքեր: Ժողովուրդն հաւատում է, որ այդ չարերը անհամար շատ են ու բնակւում են ամեն տեղ, հետապնդում մարդուն նրա կեանքի իւրաքանչիւր քայլափոխում: Հին հայերի մէջ, որպէս երևում է պատմական տեղեկութիւններից, հաւատում էին այդպիսի չար ոգիների գոյութեանը, որոնք յատկապէս ենթարկւում էին ու ծառայում գերագոյն չար սկզբունքին, չար աստուածութեանը. դրանք *դևերն* ու *վիշապազուններն* էին, որոնց անունները պահպանուել են նաև արդի ժողովրդական հաւատալիքների մէջ: Ռամկական սնոտիապաշտ վարդապետութիւնը այդ չար ոգիներին զանազան տեսակ կերպորանք ու դէմք է տալիս, ուստի մենք տեսնում ենք, որ այդ չար ոգիները բաժանւում են զանազան տեսակների, որոնք առանձին անուն-

ներ ունեն. չար հրեշտակներ, որոնց գլխաւորը Սաղայէլն է, սև սատանաներ, քաջքեր դեւեր, հրէշներ, շօտներ, թաղաներ, ալքեր, օրօրոցագողներ, փէրիներ և այլն. սրանք բոլորը յայտնի են ընդհանուր «չարք» կամ չարեր անունով: Առաջ բերենք այդ հաւատալիքներից որոշ գծեր, որոնք պարզ պատկերացնում են ընտանեկան պաշտամունքի մէջ տիրապետող դուալիզմից բարւոյ հակոսնեւան, այն է չար, խաւար ոյժերի ազդեցութեան գաղափարը:

Կանանց ամուլութիւնը շատ անգամ ժողովուրդը բացատրում է նրանով, որ քաջքերը թոյլ չեն տալիս որդի ունենալու, ուստի ամուլ կանայք միշտ փոխում են իրենց ննջարանը, կարծելով որ այդտեղ չար ոգիներ կան: Երբեմն էլ այդ չարութիւնը «կոխից» առաջացած են համարում, այսինքն նոր պսակուած ժամանակ հարսի մօտ չար ու անմաքուր մարդիկ են գալիս, խաւար, անտեսանելի ոյժեր են ձեռք տուել նրան: Եթէ ծննդաբերութեան ժամանակ կինը ուշաթափւում է, ժողովուրդը կարծում է, որ չար ոգիները տիրապետել են ծննդկանին և կամենում են լեարդը հանել-տանել: Սկսում են զանազան միջոցներով հալածել չարերին. հրացաններ են արձակում, վառօդ վառում, ծննդկանի գլխին կնքահօր գլխարկը դնում, որպէսզի չարերը կարծեն, թէ հիւանդը տղամարդ է: Շատ տեղերում էլ վերցնում են այծի լեարդը և հերթիկից դուրս նետում, սրանով չարերը խաբւում են, կարծելով, թէ դա ծննդկանի լեարդն է, վերցնում են այդ ու հեռանում: Եթէ երեխան արդէն ծնուած է լինում, նրան վերցնում են և տանելով կտուրը, դնում են երթիկի վրայ. այս ծէսով տնեցիքը երեխային նուիրում են քաջքերին, խնդրելով խնայել ու չմահացնել մօրը այդ ուշադնացութեան միջոցին:

Ծննդաբերութեան ժամանակ տան մէջ միշտ երեւան են գալիս քաջքերը և այլ չար ոգիները: Պարզ է, որ ժողովուրդն այսպիսի հաւատալիքների ազդեցութեան տակ ծննդկանին և ընդհանրապէս նրա սենեակը անսուրբ է համարում: Ուստի և գատում են ծննդկանի բաժակը,

ափսէն և այլ պարագաները և թոյլ չեն տալիս, որ սա որևէ բանի ձեռք տայ. նրա համար առանձին կերակուրներ են պատրաստում: Որովհետև չարերը դեռ շարունակում են կնոջ պառկած ամբողջ ժամանակամիջոցում մնալ այդ տանը և միշտ կարող են նրան «խփել» կամ «կոխ տալ» ուստի և չարերից պաշտպանելու համար ծննդկանի բարձի տակ դնում են նարեկ, սուր կամ դաշոյն և այլն: Այնուհետև հրաւիրում են քահանային՝ տունը «փարատելու», որպէսզի տունը մաքրեն քաջքերի պղծելուց: Քահանան օրհնում է մի աման ջուր, որով սրսկում են ծննդկանի սենեակը, պատերը, պարագաները, ամանները: Թէև այս միջոցով ժողովուրդը կարծում է, որ տունն ու ամանները սրբւում են, սակայն ինքը ծննդկանը դարձեալ համարւում է անսուրբ: Չարերը շարունակում են հետապնդել ծննդկանին և ամեն կերպ աշխատում են վնասել նորածնին: Հաւատալով որ չարերը անկնունը երեխային փոխում են իրենց նիհար որդիների հետ, աշխատում են մկրտութիւնն ըստ կարելոյն շտապեցնել: Երեխայի օրօրոցի վրայ կապում են զանազան ուլունքներ, երկաթէ փոքրիկ կտորներ, որպէսզի երեխային ազատ ու անվնաս պահեն չար աչքերից:

Ծննդկանը մինչև քառասունքի լրանալը տանից դուրս չի գալիս և ամբողջովին զբաղուած է նորածնի հոգսով: Երբ տան մօտով ննջեցեալ են անցկացնում, իսկոյն ոտքի է կանգնում և երեխային էլ բարձրացնում է. երբ մի ուրիշ ծննդկան և կամ մի կասկածելի անձնաւորութիւն է գալիս սենեակը, նա թոյլ չի տալիս նրան ներս մտնել, մինչև որ նորածինը դուրս չհանն և ապա ներս չբերեն: Հակառակ դէպքում, երեխան «կոխւում» է, այսինքն սաստիկ լղարում է և միշտ լալիս է: Քառասունքը լրացնելով, ծննդկանը լողանում է և գլուխը լուանում ծղօտի վրայ. յետոյ այս ծղօտը վառում են, որպէսզի քաջքերի հետքերը կտրեն: Ապա նախ օրօրոցը, յետոյ երեխային և վերջը

ծննդկանին դուրս են հանում տնից և «արևի երեսն դուրս բերում»¹⁾։

Այս վերջին սովորութեան մէջ շատ բնորոշ դադափար է պարփակուած. կտրելով, ոչնչացնելով չար ոգիներին հետքերը, ժողովուրդը դիմում է բարի ոյժերի հովանաւորութեանը, որ այս դէպքում անձնաւորւում է արևի, օրուայ լոյսի մէջ. չէ որ բարին և լոյսը հոմանիշ նշանակութիւն ունին։ Նոյն այդ բնաւորութիւնն է կրում մի այլ սովորութիւն, որ կատարւում է երեխայի ծննդից անմիջապէս յետոյ։ Երեխային լողացնում են, բալոււում, վրան մի հաց դնելով, դայեակը վերցնում է նրան իր թեւերի վրայ, պտտում տան մէջ մի սեան շուրջը երեք անգամ, որ չարը չդպչի, յետոյ ձեռքն ակիշը, ծայրին սոխ ամրացրած, դուրս է գալիս կտուրը և դէպի աղօթարան դառնալով ասում է երեք անգամ. «Աստուած տղիս դւամթը բաց էրան», կամ ինչպէս Բորչալիումն են ասում. «Մուրը բեգնակ, էս էրէխի փայը տաս, երկնքիցը ցօղ ցօղայ, գետնից պտուղ ստանայ, մենք էլ մեղաւորներս սրա շուաքումը ուտենք, կերակրուենք»։

Զնայած այդ բոլոր ձեռք առած միջոցներին չարերը կարողանում են այնուամենայնիւ փնաս հասցնել նորածին երեխաներին, սրանց յափշտակելով օրօրոցի միջից։ Երբ մայրը, երեխային ծիծ տալիս քնում է և իր ծծով ծածկելով նրա քիթն ու բերանը խեղդում է իր գաւակին, ժողովուրդը երեխայի մահը վերագրում է ոչ թէ նրա մօրը, այլ չարքերին, որոնք կոչւում են օրօրոցագող և սովորութիւն ունեն գողանալ մանուկներին ու սպանել²⁾։ Մարգուանի հայերը հաւատում են, որ օրօրոցը բնաւ բաց թողնել չի կարելի, որովհետեւ վնգմէ աղէկմնէրը երեխային կարող են յափշտակել կամ մեռցնել։ Ժողովրդական այս տեսակ հաւատալիքների մասին աւանդում են նաև մեր հին պատմագիրները. հայոց թագաւոր Արտաշէս Բ.-ի որ-

1) Ե. Լալայեան, Վարանդա, եր. 150։

2) Ե. Լալայեան, Գանձակի գաւառ եր. 123.

դի Արտաւազդի մասին դիւցազներգութիւնը պատմում է. «Վիշապագունները զողացան մանուկ Արտաւազդին և նրա փոխանակ դե դրին»:

Երբ երեխաները հիւանդանում են կարմրուկով, ծաղկով և այլ տեսակ տեսակ հիւանդութիւններով, ժողովուրդը կարծում է, որ դա չար հրեշտակների գործն է, չար ոգիների, որոնք կոչւում են ցաւնք. սրանք աներեւոյթօրէն շրջում են և ում սև ճիւղտով խփում են, նա հիւանդանում, մեռնում է, իսկ ում կանաչ ճիւղտով են զարնում, նա հիւանդանում և ապա վերստին առողջանում է: Ուստի այդպիսի դէպքերում հիւանդի շուրջը միշտ աղմուկ են հանում, թմբկահարում, նուագածում, որպէսզի կարելի լինէր չարերին խաբել, հեռացնել, փախցնել այդ տեղից և այդպիսով ազատել երեխաներին նրանց մահաշունչ ճանկերից: Չար ոգիները կարողանում են յափշտակել, իրենց ձեռքը գցել ոչ միայն երեխաներին, այլ և արդէն հասակն առած աղջիկներին ու տղաներին. վերջինները դառնում են «ընկեցիկ»: Երբ այդ հիւանդութիւնը որևէ մէկին բռնում է և հիւանդը գալարուելով սկսում է կանչել, խօսել փրփուրը բերանին, ժողովուրդը ասում է, որ չար ոգիներն են մտել նրանց փորը: Այստեղ ժողովուրդն նոյն հաւատալիքներն ունի, ինչ որ հին յոյները ունէին եպիշեպիսիայի կամ նիսմօջեպսիայի մասին:

Հարսանիքի ու պսակադրութեան ծէսերի մէջ էլ նկատւում են մի շարք փաստեր, որոնք նոյնպէս ապացուցանում են, որ ժողովրդի կարծիքով չարերը պատրաստ են քնասել նորապսակներին և դժբաղդացնել նրանց ապագայ ամուսնական կեանքը: Համատարած սովորութիւն է հայերիս մէջ, որ երբ պսակները դուրս են գալիս եկեղեցուց, քաւորը հանում է իր կողքից կապած թուրը և խրում է դռնագլխին, որ փեսան ու հարսը տակից անցնեն և աստանաները չկարողանան նրանց խփել: Այդ օրը հարս ու փեսան ինչ դռնի միջով էլ անցնեն, քաւորը հանում է թուրը և խրում դռնագլխին, որպէսզի տան չարքերը ոչ

մի մեծաւ չհասցնեն նորապսակներին: Նոյն այդ նշանակութիւնն ունէր և այն կրակն ու խուկը, որ թագաւորի մայրը դուրս էր հանում տանից և դրան շէմքում պտտում նորապսակների շուրջը: Այս ծէսով մայրը վանում էր ընդհանրապէս չար ոգիներին, որպէսզի սրանք չմիասէին նորապսակների բաղդին և մանաւանդ վանում էր հարսի տան բոլոր ոգիներին, որոնք կարող էին ներս խուժել աղջկայ տանից տղայի տունը և սրբապղծել նորափեսայի ընտանեկան կուտը, տնային ոգիներին ու սրբութիւններին: Ընդհակառակն և այդ ծէսով մայրը շահում էր բարի ոգիներին, տան պահապան-հրեշտակներին, որոնք այժմս աւելի ևս պիտի պաշտպանեն նորապսակներին չարերի հալածանքներից, աներեւոյթ խաւար ոյժերի վտանգներից:

Վերջապէս մարդկանց մահն էլ ժողովրդի հաւատալիքով կատարւում է յատուկ հրեշտակների ու չար ոգիների՝ հոգեառնների շնորհիւ: Վարանդայում, եթէ որեւէ գիւղում ննջեցեալ լինի, ոչ ոք գլուխ չի լուանում, ոչ ոք լուացք չի անում, վախենալով, թէ մի գուցէ հրեշտակն, որ ննջեցեալի պատճառով գիւղումն է գտնւում, «կուփէ» (խփէ):¹⁾

Բաւական համարելով վերև առաջ բերած փաստերը, աւելորդ ենք համարում այստեղ մի առ մի յիշել այն բազմաթիւ սնոտիապաշտութիւններն ու նախապաշարմունքների օրինակները, որոնք ապացուցանում են, թէ ինչ խոր արմատներով է բուն դրել ժողովրդի կրօնական հաւատալիքների մէջ չար հրեշտակների ու ոգիների գաղափարը: Նոյն իսկ քրիստոնէական եկեղեցին, ոչ միայն անգոր է եղել ոչնչացնելու ու վերացնելու ժողովրդի կրօնական աշխարհայացքից նախկին հեթանոսական վարդապետութեան էական գծերը, այլ և ինքը ստիպուած է եղել մասամբ իր ծէսերի մէջ ընդունել այդ տեսակ մի քանի սովորութիւններ և սրբազօրծելով, նրանց տալ

¹⁾ Ե. Լալայեան—Վարանդա, եր. 184.

քրիստոնէական եկեղեցու համաձայնութիւնն ու օրինակութիւնը:

Մենք փորձեցինք վերլուծել հայ ընտանեկան պաշտամունքը նեղ մտքով վերցրած: Հայ ժողովրդական հաւատալիքների մէջ հեթանոսութիւնից մնացած այնքան հետքեր կան թագնուած և այնքան մեծ ծաւալով սնտուրապաշտական սովորութիւններ, նախապաշարումներ են պարփակուած, որ այդ ամբողջ նիւթի ուսումնասիրութեան համար հատորներ էր հարկաւոր գրել: Նպատակ ունենալով, ներկայացնել ընթերցողներին միմիայն հայ ընտանիքի մէջ, օճախի շուրջը, գերդաստանի սահմաններում տիրապետող հաւատալիքների ամբողջ պատմութիւնը, մենք թողնում ենք առանց յիշելու և առանց վերլուծելու հայ ժողովրդի կրօնական հայացքների շատ ու շատ կողմերը, բազմաթիւ բնորոշ գծերը, որոնք արդէն դուրս են գալիս ընտանեկան համայնքի շրջանակներից:

